


ապրոկութեան ուժերի գուր վատնում կլինէր եւ այլասեռում յառաջ կրերէր, եթէ կանայք սկսեն տղամարդու կոպիտ եւ շոր աշխատանքներով գրաղուել: — Ճանկալի էր, որ «Մուլճ»ը զգուշանար այս տեսակ ինդիքների ծուռ բացատրութեան տիտուր հետեւանքներց:

Կ. Պ.



Հայերէն եւ Վրացերէն արձանագրութիւնների ժողովածու:

Պրոֆեսոր Մառը մեղ գրում է Պետերբուրգից, որ առաջիկայ Յունիսի մինչև 15-ը դալու է Կովկաս և ամբողջ ամառը մնալու է մեղ հիւր: Տարիներից ի վեր ամեն ամառ յայտնի ուսումնականը զիտնական նպատակով ճանապարհորդութիւններ է կատարում և քրքրելով Երոպայի, Հայոց և Վրաց վանքերի մատենադարանները, Աթոն, Սինայ, Երուսաղեմ՝ ամեն տեղից հետը բերում է իւր բազմաթիւ արգելու հրատարակուած և ծրագրուած ուսումնասիրութիւնների համար հարուստ պաշար: Նա այն ուսումնականների թուիցն է, որ չափազանց սիրելով կարինեաի աշխատանք, միևնոյն ժամանակ շարունակ ձգտում են այդ աշխատանքի համար որոնել նորանոր չուսումնասիրուած և մինչև այժմ անձեռնմխելի մնացած յիշատակարաններ: Յիշենք նրա ամենաավերջին ուսումնասիրութիւնները, որոնք մեր գրական մի քանի հարցերին, եթէ չասենք վերջնական, բաւական յաջող լուծում են տալիս, և այդ գլխաւորագեստանապարհորդութիւններից ձեռք բերած նորանոր նիւթերի շնորհիւ: Նա պարզեց Մարիբասի և Խորենացու կապը, գտել է և հրատարակելու է Աղաթանգեղոսի պատմութեան արաբերէն բնագիր, որը հաստատուն կռուաններ է տալիս Աղաթանգեղոսի գրուածքի սկզբնագրի և նրա նախնական ծա-

նեղութեան պէտք է գրուած լինէր Կեօնիգսբերգում. Փոխ երլանգինում — Երլանգէնում. Փոխ. Տիւրինգենում — Տիւպինգնում. իսկ Կեօլնում համալսարան չկայ:

ւալի մասին, վերջապէս մի շարք ուսումնասիրութիւններով շեշտելով հայ և վրացական հին գրականութեան սերտ կապի, իբրև նշանաւոր երեսյթի վրայ, հաստատում է, որ վրացերէն ո. Գիրքը թարգմանուած է հայերէնից. և որովհետեւ հայերէնը ասորական այժմ կորած, բայց կարեւոր բնագրից է ծագում, թէ ենթարկուել յունարէնի ազդեցութեան, հետեւցնում է, որ վրացերէն և հայերէն բնագրերը շատ կնպաստեն վերականգնել կորած հին ասորականը: Նման հարցեր զրական լուծում չեն ստանալ եթէ յարգելի պըոփեսորը իւրանիսոնջ աշխատութիւնները սահմանափակէր միայն հին բազմից քրքրուածնիւթերով, և իւր ճանապարհորդութիւններով չետախուզէր ձեռագրերի բազմաթիւ ժողովածուներ: Նրա այս ամսաւուայ ճանագար հորդութիւնն էլ ունի այդպիսի զուտ ուսումնական նպատակ որի ժամանակ մասղիր է սկսել իրադորձել իւր և ուրիշների բազմից արտայսյտուած ցանկութիւնը—կազմել հայերէն և վրացերէն արձանագրութիւնների Corpus. ժողովածու:

Հին շինութիւնների, քարերի, աղիւնների, անօթնների ևլն. վրայ պահպանուած արձանագրութիւնները պատմուկան մեծ կարեւորութիւն և արժէք ունին: Պատմութեան շատ նոր էջեր են գրուել դոցա շնորհիւ թերութիւններ լրացրուել, պատմուկան անձշտութիւններ ստուգուել: Նոքա միենոյն ժամանակ հարուստ նիւթ են գեղարուեստի և քաղաքակըրթութեան պատմութեան համար: Աակայն երբ արձանագրութիւնները ցաք ու ցրիւ տպագրուած են կամ ժողովուած պատահական գրուածքներում, նոցանից օդտուելը կախուած է մնում մեծ գժուարութիւնների հետ՝ շատ քչերին է այդ յաջողուում: Ամեն բանի ձեռնարկող եւրոպացիները վազուց ձեռնարկել և յաջողութեամբ միացրել են յայտնի տեսակի, այս կամ՝ այն ազգի արձանագրութիւնները և պատմութիւն ուսումնասիրողի համար հաստատուն զէնք ստեղծել: Աւելորդ չենք համարում յէշատակել հետեւալ յարտնի ժողովածուները—Corpus Incriptionum graecarum, C. I. Latinarum, C. I. Atticarum ևն., որոնք բազմաթիւ խոշոր միածայ հատորներ են, հմուտ մասնագէնների ձեռքով ժողովուած և ծանօթութիւններով պարզաբանուած:

Հայերս էլ զգացել ենք մեր բազմաթիւ արձանագրութիւնների կարեւորութիւնը. յիշենք Յ. եպիսկոպոս Նահիսամունեանի, Սարդիս եպիսկոպոս Հասան-Զալականի, Վ. ևնդ Ալիշանի աշխատութիւնները. իսկ մասնաւոր պատահակառ

Հրատարակածները բազմաթիւ են: Այդպիսի հրատարակութիւններ չեն կարող ներկայումս բաւարար համարուել: անհրաժեշտ է, որ մենք ունենանք մեր արձանագրութիւնների ժողովածուն—Corpus. Պրոֆեսոր Մատի այս անգամուայ կովկաս գալը կատ ունի այդ նպատակի հետ: Նա այդ մասին ինձ զբում է հետեւյալը:

«Հ. Ա. Մեսրովաց. Երկտողս գրում եմ՝ նախազգուշացնելով մի բանի մասին. հարցը ծանրակշխուել, և Զեզ Լութեան կողմէց յայանի: Մենք առիթ ենք ունեցել խօսակցելու: Ժամանակը չի ներում. պէտք է հաւաքուեն և հրատարակուեն արձանագրութիւններ Հոյոց և Վրաց: Հնագիտական մասնաժողովից առանձին պաշտօնական թուղթ եմ՝ առնում և Թիֆլիսում շահագրգոռող կամ՝ հետաքրքրուղ մասնագետների նիստ եմ ուղում՝ կայտցնել: Նիստը պէտք է կայանայ Յունիսի մօտաւորապէս 8-12 ին: Յօւսով և մասնաւոր շնորհ կրերեք Ճշտորէն թուի մասին յետոյ կաեղեկացնեմ: Հիմա Զեր ընդհանուր համաձայնութեանն եմ սպասում: Հաղորդեցր ում կարող եք Զեր կազմիքով հըաւերել (երիտասարդներից): Հըաւիրուածները փրայիներից և հայերից միասին կլինին մօտ 10-12 հոդի»:

Պետքուրդի կայսերական հնագիտական մասնաճիւղը հետաքրքրուած է Հայերէն և Վրացերէն արձանագրութիւնների ժողովածուով, մանաւանդ որ այդպիսի ձեռնարկութեան առաջուց էլ նպատակը հրատարակելով նրանի, Բագրատէի և ուրիշների աշխատութիւնները: Ներկայումն գործի ղեկավարը լինելու է պր. Մատը, որի գիտնական բարեմասնութիւնները ամենաւե զբաւական են գործի յաջողութեան. իսկ գործին սրամնց օգնող վրացիներ և Հայեր կդանուին ոչ թէ տաս, այլ աւելի անձինք: Հաստատ կարող ենք ասել, որ հայ վրացական և պատմութեան ուսութիւնամբ ամենաբար հողի վրայ կլըուի, ճոխ և նոր նիւթերով:

Մեսրով վարդապետ

Են մշտական աշխատանքներ և պատման աշխատանքներ, ուստի անհանդաւ առաջարկած աշխատանքներ ու քայլական աշխատանքներ: Առաջարկած աշխատանքներ առաջարկած աշխատանքներ: Անհանդաւ աշխատանքներ: Անհանդաւ աշխատանքներ: Անհանդաւ աշխատանքներ: Անհանդաւ աշխատանքներ: Անհանդաւ աշխատանքներ: